www.iravaban.net կայքի 14.10.2015թ.
«ԿԸՀ-ն պատրաստվում է հանրաքվեին. անհետացող թանաքն արդեն իսկ գնվել է բավականին թանկ գնով» հրապարակման կապակցությամբ

2015 թվականի հոկտեմբերի 14-ի www.iravaban.net կայքի «ԿԸՀ-ն պատրաստվում է հանրաքվեին. անհետացող թանաքն արդեն իսկ գնվել է բավականին թանկ գնով» վերտառությամբ հրապարակման մեջ կատարվել են ոչ լիարժեք հաշվարկներ, և արվել է եզրահանգում, ըստ որի՝ նախորդ համապետական ընտրություններից շուրջ երեք տարի անց դրոշմակնքման համար նախատեսված հատուկ թանաքանյութը և դրոշմակնքման բարձիկները նույն կազմակերպությունից ձեռք են բերվել գրեթե կրկնակի անգամ թանկ գնով:

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը պարզաբանում է, որ ներկայացված հաշվարկը թերի է, հետևաբար դրա հիմքով կատարված դատողություններն ու եզրահանգումները չեն համապատասխանում իրականությանը:

Այսպես՝ 2013 թվականի համապետական ընտրությունների ժամանակ ձեռք բերված 2.300 սրվակ հատուկ թանաքանյութի և նույնքան էլ դրոշմակնքման բարձիկների համար գումարի վճարումը կատարվել է երկու մասով, մինչդեռ հրապարակման մեջ նշված է փոխանցվող գումարի միայն առաջին չափաքանակը:

Մասնավորապես՝

1. սկզբնական վճարվել է ձեռք բերվող ապրանքի 70%-ը. 2012 թվականի դեկտեմբերի 21-ին փոխանցվել է **10.416.101** դրամ (21.12.2012թ. ՀՀ ԿԲ–ի կողմից հրապարակված 1 ԱՄՆ դոլարի փոխարժեքը կազմել է **404.75** դրամ, այսինքն փոխանցվել է **25.735** ԱՄՆ դոլար),
2. ապրանքն ամբողջությամբ մատակարարվելուց հետո կատարվել է մնացած 30% վճարումը. 2013 թվականի հունվարի 23-ին **4.462.956** դրամ (23.01.2013թ. ՀՀ ԿԲ–ի կողմից հրապարակված 1 ԱՄՆ դոլարի փոխարժեքը կազմել է **405.44** դրամ, այսինքն փոխանցվել է **11.007** ԱՄՆ դոլար):

Այսինքն, 2.300 սրվակի և դրոշմակնքման բարձիկների համար փոխանցվել է ընդամենը **14.879.057** դրամ կամ **36.742** ԱՄՆ դոլար:

Այսինքն մեկ սրվակի և մեկ բարձիկի համատեղ գինը կազմել է **16** ԱՄՆ դոլար **(36.742 : 2300)**:

2015 թվականին ձեռք բերվող հատուկ թանաքանյութի 2.500 սրվակի և նույնքան էլ դրոշմակնքման բարձիկների համար ՀՀ Կառավարության 2015 թվականի հունիսի 18-ի N 663-Ն որոշմամբ հատկացվել է **21.372.794** դրամ:

18.06.2015թ. ՀՀ ԿԲ–ի կողմից հրապարակված 1 ԱՄՆ դոլարի փոխարժեքը կազմել է **473.96** դրամ, համաձայն որի՝ **21.372.794** դրամը հավասար է **45.094** ԱՄՆ դոլարի:

Այսինքն մեկ սրվակի և մեկ բարձիկի համատեղ գինը կկազմի **18** ԱՄՆ դոլար **(45.094 : 2.500)**:

2 ԱՄՆ դոլար գնային տարբերությունն առաջացել է՝ պայմանավորված 2012թ. և 2015թ. մեկ սրվակ թանաքանյութի, մեկ բարձիկի և օդային փոխադրումների գնային տարբերությամբ: Հարկ ենք համարում լրացուցիչ նշել, որ օդային փոխադրման արժեքը ներառվում է մատակարարվող ապրանքի գնի մեջ:

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով